ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը ազդարարում է «Հայագիտական հետազոտություններ» հանդեսի ծնունդը: Այն գրախոսվող պարբերական է, որի նպատակն է շրջանառել բարձրորակ հայագիտական աշխատանքներ (հաշվետվություններ, հետազոտություններ, տեսական-մեթոդաբանական հոդվածներ): Թեմատիկ, ժամանակագրական, էջաքանակային և նկարային սահմանափակումներ չկան:

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG), ծավալը՝ մինչև 10 էջ: Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են հոդվածներ նաև ռուսերեն և եվրոպական լեզուներով: Հոդվածները պետք է ունենան հստակ կառուցվածք՝ նախաբան, բուն տեքստ (հնարավորինս շատ ենթավերնագրերով), եզրակացություն, ռեզյումե (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն, այլ լեզվի դեպքում՝ հայերեն, մոտ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Arial Unicode, ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman :
2. Տառաչափը՝ 12, տողերի միջև՝ 1.5 :
3. Գծանկարները, սև-սպիտակ կամ գունավոր լուսանկարները ներկայացնել տեքստում որպես հաջորդական նկարներ (Նկ. 1, 2, 3…):
4. Գծանկարների և սև-սպիտակ լուսանկարների խտությունը պետք է լինի ոչ պակաս քան՝ 600, գունավոր նկարներինը՝ 300 dpi:
5. Հղումը՝ տեքստի մեջ փակագծերում.

- **Արխիվային նյութեր** (Վերնագիր, 1920,ՀԱԱ, ֆ.199, ց. 1, գ. 10, թ. 12-13:):
- **Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ** (Արամը…,1991, էջ 12-13:):
- **Հուշագրություններ և ուսումնասիրություններ** (Սիմոնյան Հ.,2009, էջ 12-13:):
- **Մամուլ (**Վրացեան Ս.,1925,էջ 12-13:**): Հեղինակի Ա.Ա.Հ. բացակայության դեպքում գրել նյութի վերնագրի մի հատվածը** (Ազատագրական …, 1991,էջ 12-13:):

Իսկ համացանցային նյութերի ու ծանոթագրությունների հղումները, ինչպես նաև երկուսից ավելի հղում պարունակող նյութերը տանել տողատակ.

6. Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը տալ հոդվածի վերջում՝ նշելով հղված նյութի ամբողջական տվյալները:

Օրինակ՝

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Սկզբնաղբյուրներ

ա.Արխիվային նյութեր

Հայերեն

1.1. Հեղինակի Ազգանունը Ա., Նյութի վերնագիրը - ՀԱԱ, ֆ.199, ց. 1, գ. 10:

(Հեղինակի կամ վերնագրի տվյալներից մեկի բացակայության դեպքում գրել առկա տվյալը):

բ.Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1.2. «Արամը, մահուան յիսնամեակին առթիւ», Երեւան, Միքայէլ Վարանդեան հրատ., 1991:

2. Հուշագրություններ և ուսումնասիրություններ

Հայերեն

2.1. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք 3-րդ,Երևան,ԵՊՀ հրատ.,2009:

3. Մամուլ

Հայերեն

3.1. Վրացեան Ս., Մեղադրանքներ եւ իրողութիւններ,«Դրօշակ» ամսագիր, N 2, Փարիզ, օգոստոս, 1925:

4. Համացանցային նյութեր

4.1. Հովհաննիսյան Պ., Հայկական հարցի և ցեղասպանության մատենագիտության պատմության համառոտ ակնարկ - **http://www.armin.am/images/menus/548/P_Hovhannisyan.pdf** :

ՀՀՀ-ի խմբագրություն

- Գլխավոր խմբագիր՝ Արամ Սիմոնյան
- Պատասխանատու քարտուղար՝ Վարուժան Պողոսյան
- Խմբագրական խորհուրդ՝ Միեր Հովհաննիսյան, Էդիկ Մինասյան, Ալիկ Ղարիբյան, Աշոտ Հայրունի, Հայրապետ Մարգարյան, Ալեքսանդր Սաֆարյան, Հայկ Ավետիսյան, Հրաչիկ Բայրամյան, Արծրուն Ավագյան, Յուրա Ավետիսյան, Սամվել Մուրադյան, Լիանա Հովսեփյան, Սեյրան Զաքարյան:

Հոդվածները ներկայացնել՝

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 7-րդ հարկ, 701 սենյակ, (handes@armin.am) :